ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1941–1942 թթ.)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.

Հայրենական մեծ պատերազմը սանձազերծելու հենց առաջին իսկ օրերից ֆաշիստական Գերմանիայի զորքերը զգալի հաջողությունների հասան: Արդեն 1941 թ. հունիսի 24-ին նրանք գրավեցին Ռիգան, հունիսի 28-ին՝ Մինսկը, օգոստոսի 28-ին՝ Տալինը, սեպտեմբերի 21-ին՝ Կիևը և այլն[1], իսկ հոկտեմբերին արդեն հասել էին Մոսկվայի և Լենինգրադի մատույցներ: Ծանր վտանգ կախվեց երկրի վրա. խորհրդային կառավարությունը, ելնելով իրադրությունից, ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք վճռական նշանակություն ունեցան հայրենիքի պաշտպանության գործում: Ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատանքներին զուգահեռ՝ հսկայական աշխատանք տարվեց ժողովրդական տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու ուղղությամբ: Այդ նպատակով ընդունվեցին հատուկ որոշումներ գյուղատնտեսության աշխատանքները վերակառուցելու ուղղությամբ և առաջադրանքներ տրվեցին միութենական բոլոր հանրապետություններին, այդ թվում՝ անդրկովկասյան հանրապետություններին, ինքնավար հանրապետություններին ու մարզերին, ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին:

ԼՂԻՄ մարզային կուսակցական և խորհրդային մարմինները, աշխատավորների մոբիլիզացման և մարզի պաշտպանության ամրապնդման աշխատանքներին զուգընթաց, մեծ գործ կատարեցին արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը ռազմական ռելսերի վրա փոխադրելու ուղղությամբ: Նախ անհրաժեշտ էր ամբողջ արտադրությունը ենթարկել ռազմաճակատի պահանջներին, կազմակերպել ռազմական արտադրանքի թողարկում, այդ նպատակով մոբիլիզացնել տեղական բոլոր միջոցները, երկրորդ՝ մեծապես ավելացնել գործող ձեռնարկությունների կարողությունները, կառուցել նոր արտադրամասեր՝ զինելով դրանք նոր սարքավորումներով, ստեղծել նոր ձեռնարկություններ, հիմք դնել նոր արտադրության, չորրորդ՝ արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը հարմարեցնել պատերազմական պահանջներին, հինգերորդ՝ ստեղծել արտադրական նոր ձեռնարկություններ, որոնք, պետք է Ադրբեջանի ռազմաարդյունաբերական գործարանների ու ձեռնարկությունների անխափան աշխատանքն ապահովեին ռազմավարական նշանակություն ունեցող արտադրանքով: Սակայն այս ամենը կապված էր մի շարք օբյեկտիվ դժվարությունների հաղթահարման հետ: Ամենից առաջ զորահավաքի հետևանքով ռազմաճա-

[1] *Великая Отечественная война, кн. 1, Суровые испытания, М., 1998, с. 129-197.*

կատ էին մեկնել շուրջ 45000 բանվորներ, ծառայողներ և այլ աշխատողներ, որոնց ճնշող մեծամասնությունը արտադրության մեջ փորձ, հմտություն ու որակավորում ձեռք բերած կադրեր էին: Վերջիններիս բացակայությունը խիստ ծանր ազդեց արտադրության վրա[2]: Երկրորդ՝ ԼՂԻՄ-ի արդյունաբերական ձեռնարկությունների կանոնավոր աշխատանքը խախտվել էր նաև այն պատճառով, որ գերմանաֆաշիստական զորքերին հաջողվել էր պատերազմի առաջին ամիսներին զավթել Ուկրաինայի մեծ մասը, Բելոռուսիան, Մոլդովան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, ՌՍՖՍՀ հյուսիսարևմտյան և կենտրոնական մի շարք մարզեր, որտեղ ապրում էր ԽՍՀՄ բնակչության 45 տոկոսը: Այստեղ արտադրվում էին ածխի 69, չուգունի՝ 68, պողպատի՝ 58, ալյումինի՝ 60 տոկոսը[3]. դրանով իսկ խափանվում էր ինչպես Անդրկովկասի, այնպես էլ ԼՂԻՄ-ի արդյունաբերության մատակարարումը: Արդյունաբերությունը ռազմաճակատի պահանջներին համապատասխան կազմակերպելու հիմնահարցը հաջող լուծելու նպատակով նաև և առաջ հարկավոր էր լուծել արտադրական ձեռնարկությունները կանոնավոր բանվորական ուժով ապահովելու հարցը: Մարզի առջև ծառացած խիստ պատասխանատու խնդիրը՝ ապահովել ոչ միայն գոյություն ունեցող ձեռնարկությունների կանոնավոր աշխատանքը, այլև գործի դնել նոր հզորություններ, պահանջում էր զգալի չափով ավելացնել բանվորական ուժը: Ռազմական բնույթի արտադրանքի թողարկման, ինչպես նաև նոր ձեռնարկությունների կազմակերպման համար պահանջվում էր բարձրացնել բանվորների որակավորումը, անհրաժեշտ էին նոր մասնագետ կադրեր, նոր ուժեր, որոնք ի վիճակի կլինեին ապահովել նոր օբյեկտների կառուցումը և դրանց շահագործումը: Ինչպես այս, այնպես էլ արդյունաբերության ռազմական վերակառուցման հետ կապ- ված մնացած հարցերի լուծումը դարձավ ԼՂԻՄ մարզկոմի և մարզգործկոմի առաջնահերթ խնդիրը: Ելնելով ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունիսի 29-ի հանրահայտ հրահանգի դրույթներից՝ 1941 թ. հուլիսի 30-ին ԼՂԻՄ-ի մարզկոմն ու մարզգործկոմը միջոցառումներ մշակեցին այդ ուղղությամբ: Վերանայվեցին պատերազմից առաջ հաստատված 1941 թ. երրորդ եռամսյակի ժողովրդատնտեսական մոբիլիզացիոն պլանները, սահմանվեցին մարզի արդյունաբերության խնդիրները, արտադրանքի ծավալները: ԽՍՀՄ Ժողկոմխորհը 1941 թ. օգոստոսի 28-ին հատուկ որոշում ընդունեց չորրորդ եռամսյակի ժողովրդատնտեսական պլանի մասին: Ելնելով դրանից՝ մարզի իշխանությունները քննեցին և որոշակիացրին մար-

[2] **Арутюнян К. А.** *Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), Е., 2009, с. 12.*

[3] *История Коммунистической партии Советского Союза в шести томах, т. 5, кн. 1, М., 1970, с. 268.*

զի 1941 թ. չորրորդ եռամսյակի ժողովրդական տնտեսության խնդիրները[4]:

Մինչև մարզի արդյունաբերությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու բուն հարցին անդրադառնալը, հարկ ենք համարում համառոտ ակնարկով ցույց տալ, թե ինչ վիճակում էր ԼՂԻՄ-ի արդյունաբերությունը պատերազմի նախօրյակին: Մարզում հատկապես զարգացած էր մետաքսի, անտառային և սպիրտի արդյունաբերությունը, զգալի աշխատանք էր տարվել էլեկտրաէներգիայի զարգացման և գյուղատնտեսական մթերքների վերամշակման ուղղությամբ. Ասկերանում ու Կարմիր շուկայում գործում էին սպիրտի և կոնյակի, Ստեփանակերտում՝ ոչ ալկոհոլային խմիչքի ձեռնարկություններ: Օղու, գինու և կոնյակի արտադրությունը ղեկավարում էր Ղարաբաղի գինու սովխոզտրեստը: Լեռնային Ղարաբաղն ուներ զարգացած խաղողագործություն, որը հատկապես տարածված էր մարզի նախալեռնային շրջաններում: Այստեղ խիստ զարգացած էր նաև թթենու մշակումը և նրա պտուղներից օղու, սպիրտի, դոշաբի արտադրությունը, նաև այլ մրգերի վերամշակման արտադրությունը: Լեռնային շրջաններում լայն տեղ էր հատկացվում մեղվաբուծությանը[5]:

Պատերազմի նախօրյակին մարզն ուներ նաև համեմատաբար զարգացած մետաքսագործական արդյունաբերություն՝ ղեկավարությամբ Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության վարչության: Մետաքսագործական գլխավոր ֆաբրիկան Ստեփանակերտում էր: Այդ ճյուղի մանր ձեռնարկություններ կային Խնձրիստանում, Մեյիդշենում, Դաշբուլաղում, Բադարայում, Հիլիսում, Ղարաղշլաշում, Հարավում, Չանախչիում, Զար-Հադրութում և Քարինտակում:

Ստեփանակերտում գործում էր նաև փայտամշակման ու մեխանիկական արհեստանոց, որը հնարավորություն էր ստեղծել մարզի մետաքսարդյունաբերական և մյուս արդյունաբերական ձեռնարկությունների հաստոցների նորոգումը կատարելու տեղում, պատրաստելու հնարավոր պահեստամասերը և դրանով իսկ զգալիորեն կըրճատելու աշխատանքային պարապուրդները:

Մարզի տնտեսական կյանքում որոշ տեղ ուներ նաև ջրաղացքարերի արտադրությունը: Լեռնային երկրամասի համար խիստ անհրաժեշտ ջրաղացքարերը հիմնականում պատրաստվում էին Վանք գյուղի մոտ գտնվող քարհանքերում: Մարզում գործում էին նաև կղմինդրի և կրի արդյունահանման ձեռնարկություններ, ավազահանքեր, գորգագործական ֆաբրիկա (Շուշիում): Սրանք, ինչպես նաև Ստեփանակերտի փայտամշակման ու մեխանիկական արհեստանոցը ներառված էին ԼՂԻՄ-ի տեղական արդյունաբերական կոմբինատի մեջ[6]:

---

[4] *РГАСПИ (Российский государственный архив социально-политической истории), ф. 17, оп. 22, д. 52, л. 79.*

[5] **Աբրահամյան Հ.,** *Մարտնչող Արցախը 1917-2000, գ. Բ, 1923-1985, Ե., 2005, էջ 37-38:*

[6] *Նույն տեղում, էջ 46-47:*

Տեղական արդյունաբերության ճյուղերից կարևոր նշանակություն ուներ փայտամշակությունը: Բացի Ստեփանակերտի փայտամշակման ֆաբրիկայից, մարզում պատերազմի նախօրյակին գործում էին նաև Տումի և Բաղարա գյուղերի, ինչպես նաև Մարտակերտի շրջանի սղոցարանները, որոնք փայտանյութ էին մատակարարում հիմնականում Ստեփանակերտի փայտամշակման ֆաբրիկային: Իհարկե, պատերազմի նախօրյակին ԼՂԻՄ-ի արդյունաբերության առաջատարը Ստեփանակերտի Բաքվի 26 կոմիսարների անվան մետաքսի կոմբինատն էր, որտեղ աշխատում էր ավելի քան 2000 բանվոր: Միայն 1940 թ. կոմբինատի համախառն արտադրանքը կազմեց 98,1 տոննա մետաքսահումք, 120000 քառակուսի մետր կտոր, 25,9 տոննա ոլորաթել[7]: Նույն թվականին Ղարաբաղի գինու սովխոզտրեստի ձեռնարկությունների համախառն արտադրանքը կազմեց 105,2 հազար դեկալիտր գինի, 12 հազար դեկալիտր կոնյակ[8]:

1940 թ. զգալի չափով մեծացավ նաև մարզի տեղական արդյունաբերության ձեռնարկությունների արտադրանքը, որը 1930 թ. մակարդակը գերազանցեց 11 անգամ[9]:

Այժմ այն միջոցառումների մասին, որ ձեռնարկվեցին Հայրենական մեծ պատերազմը սկսվելուց հետո ԼՂԻՄ-ի արդյունաբերությունը ռազմական ռելսերի վրա փոխադրելու ուղղությամբ: Մարզկոմի բյուրոն 1941 թ. հունիսի 25-ին անցկացրեց փակ նիստ, որին մասնակցում էին մարզկոմի քարտուղար Ավանեսովը, բյուրոյի անդամներ Զամարաևը, Գրիգորյանը, Պետրոսյանը, Շախրամանյանը, Սողոմոնյանը, Կասպարովը և Իոաննիսյանը, ինչպես նաև մարզկոմի արդյունաբերության գծով քարտուղար Մանուկյանցը, ռազմական բաժնի պետ Ասրիյանը և հատուկ սեկտորի վարիչ Կասպարովը, զինկոմ Կիրիլովը, մարզային միլիցիայի պետ Ղազարյանը, Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նախագահ Օրբելյանը, Ղարաբաղի մարզառևտրի տնօրեն Խաչատուրովը, ներքին առևտրի պետ Ավագիմովը, Ստեփանակերտի քաղաքային առևտրի տնօրեն Գրիգորյանը և մարզային սպառկոոպմիության նախագահ Ավակովը[10]: Մարզբյուրոն, մի շարք հրատապ հարցերի հետ՝ զորահավաքի ընթացքի, ներքին կարգապահության, բնակչության և զորամասերի մատակարարման ընթացքի մասին, քննարկեց նաև արդյունաբերական ձեռնարկությունները պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու, արտադրական պլանների կատարման և ռազմամոբիլիզացիոն պլանի համաձայն ռազմական արտադրանք թողարկելու հարցերը[11]:

Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության ձեռնարկությունները մինչև պատերազմը արտադրում էին հիմնականում մետաքսի

---

[7] *Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах (այսուհետև՝ Достижения СНК ...), Степанакерт, 1963, с. 19-20.*

[8] *Նույն տեղում, էջ 22:*

[9] *ԼՂՀ ազգային արխիվ (այսուհետև՝ ԼՂՀ ԱԱ), ֆ. 82, ց. 1, գ. 21, թ. 19:*

[10] *РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 52, л. 81.*

[11] *Նույն տեղում, թ. 81-85:*

սովորական թել: Մարզի իշխանությունների առջև խնդիր դրվեց դրանց աշխատանքը հարմարեցնել պարաշյուտի կտոր արտադրելու համար: Դա պահանջում էր արտադրության տեխնոլոգիական զգալի վերակառուցում: Ամենից առաջ հարկավոր էր կտրուկ բարձրացնել թողարկվող կտորի որակն այնպես, որ հնարավոր լիներ օգտագործել պարաշյուտների արտադրության համար: Շուտով Ստեփանակերտի Բաքվի 26 կոմիսարների անվան մետաքսի կոմբինատը սկսեց թողարկել բարձր որակի մետաքսաթել: Պետք էր ամրապնդել այդ հաջողությունը և ավելացնել արտադրանքի թողարկումը: Կոմբինատի կոլեկտիվը ջանք չէր խնայում կատարելու հայրենիքի պատվերները: Նրանք իրենց անձնվեր աշխատանքով օրինակ էին ծառայում երիտասարդ, նորեկ մետաքսագործների համար, որոնք փոխարինելու էին եկել ռազմաճակատ մեկնած իրենց հայրերին, եղբայրներին ու զավակներին: Այսպես, օրինակ, գործման արտադրամասի հերթափոխի վարպետ Վաղարշակ Հովսեփյանը ինքնուրույն սպասարկում էր 20 դազգահ՝ գերակատարելով առաջադրանքը մի քանի անգամ: Նրանից հետ չէին մնում Զյումրուդ Դանիելյանը, Գյուզլազար Աղաբաբյանը, Քնարիկ Գասպարյանը և ուրիշներ: Կոմբինատը շուտով անցավ երկհերթ աշխատանքի: Հումքի, վառելանյութի, բանվորական կադրերով բավարարման խնդիրները մշտապես ինչպես մարզային, այնպես էլ Ստեփանակերտի շրջանային կուսակցական և խորհրդային մարմինների ուշադրության կենտրոնում էին:

Շուտով Ղարաբաղի մետաքսի կոմբինատի առջև ռազմական կարևորության նոր խնդիր դրվեց. արտադրել նաև վիրահատության համար անհրաժեշտ մետաքսաթել, ավիացիոն արդյունաբերության համար՝ մեկուսիչ ժապավեն, հրետանու համար՝ հատուկ մետաքսի կտոր[12]: Սրանք վերոնշյալ ձեռնարկությունների համար նոր արտադրատեսակներ էին: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ղարաբաղի մետաքսագործների արտադրանքը ստացավ բարձր գնահատական: Շնորհիվ նրանց հերոսական աշխատանքի՝ ոչ միայն կարճ ժամանակահատվածում յուրացվեց ռազմական նշանակություն ունեցող արտադրանքների թողարկումը, բարձրացվեց թողարկվող ապրանքի որակը, այլև 1941 թ. համար առաջադրված պլանը կատարվեց 120,6 տոկոսով[13]:

Իրենց աշխատանքը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցեցին նաև ԼՂԻՄ-ի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները: Մարզի տեղական արդյունաբե- ությունը ձևավորվել էր հիմնականում պատերազմին նախորդող տասնամյակում: Այն ուներ շուրջ 40 ձեռնարկություն, որոնք արտադրում էին շինանյութ և լայն սպառման ապրանքներ: Յուրացնե-

---

[12] *РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 61.*

[13] **Шахраманян Г. Л.** *Нагорно-Карабахская областная организация Коммунистической партии в годы Великой Отечественной войны Советского Союза (1941-1945 гг.). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. Баку, 1964, с. 6.*

լով նոր արտադրատեսակների արտադրությունը, կատարելով կառավարական պատվերները՝ ԼՂԻՄ-ի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները պատերազմի առաջին իսկ ամիսներին արդեն սկսեցին իսլանդական շպատի արդյունահանումը, յուրացրին Մ-50 արկղների, տակառների պատրաստման գործը, կահույքի ձեռնարկություններում իրացվեց ավիացիայի համար կաղնու ամուր ատաղձի և ֆաներայի արտադրությունը, սկսվեց ռազմական կարիքների համար սայլերի, ձիաթամբերի և հեծելասարքերի պատրաստումը: 1941 թ. վերջերին և 1942 թ. սկզբներին Ստեփանակերտում բացվեցին առանձին սայլաշինական արհեստանոց, լուցկու, կաշեմշակման, օճառի, գորգագործական փոքր գործարաններ և այլն[14]: Շուշիի և Մարտակերտի կաշեգործարանները ամբողջովին վերակառուցվեցին՝ անցնելով Կարմիր բանակի համար անհրաժեշտ կաշվի հումքի արտադրության[15]: Ստեփանակերտի մեխանիկական գործարանում կազմակերպվեց ձուլման արտադրամաս, որը օրական տալիս էր 1 տոննա պղնձի և 3 տոննա չուգունի համաձուլվածք: Տարեվեր- ջին սկսեցին օրական ձուլել 3 տոննա պղնձի և 10 տոննա չուգու- նի համաձուլվածք[16]: Կազմակերպվեց նաև ավտովերանորոգման արտադրամաս, որը հաջողությամբ էր կատարում ինչպես մարզի տարածքում տեղակայված զորամասերի, այնպես էլ ժողովրդական տնտեսության ավտոպարկերի մեքենաների և նեղգիծ երկաթուղու վերանորոգման աշխատանքները: Գործարանում յուրացվեց նաև գյուղատնտեսական տեխնիկայի (տրակտորների, կոմբայնների, կալսիչների, շարքացանների, գութանների), մեխանիկական ջրաղացների համար պահեստամասերի արտադրությունը, ընդլայնվեց լայն սպառման ապրանքների արտադրությունը և տեսականին:

Մարզկոմի բյուրոն 1941 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով ԼՂԻՄ-ի տեղարդվարչության առջև խնդիր դրեց ավիացիոն արդյունաբերության կարիքների համար մարզում ավելացնել կաղնու, հացե-նու, հաճարի, ճապկու կարծր փայտանյութի արտադրությունը: Եթե 1941 թ. համար պլանով նախատեսված էր մթերել 500 մ^3 փայտանյութ, ապա 1942 թ. համար՝ 10000 մ^3 [17]: Նույն որոշմամբ հանձնարարվեց տեղարդվարչության պետ Միրզոյանին՝ ավելացնել Հադրութի շրջանի Ծակուռի գյուղի մոտ գտնվող իսլանդական շպատի արտադրությունը, որը խիստ անհրաժեշտ էր հրետանային արդյունաբերության համար: Միաժամանակ խնդիր դրվեց տնայնագործական եղանակով սկսել արճճի հանույթը Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղի մոտ գտնվող հանքից[18]:

Կարճ ժամանակահատվածում իր աշխատանքը վերակառուցեց նաև Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան: Ռազմաճակատի կարիքների համար Մ-50 արկղների, ձիասայլերի, ավիացիոն արդյունաբերության համար պինդ փայտանյութի յուրացման

---

[14] *Սովետական Ղարաբաղ, 23.VI.1945:*
[15] *Նույն տեղում, 5.V.1945:*
[16] *РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 60.*
[17] *Նույն տեղում, թ. 61:*
[18] *Նույն տեղում:*

հետ ֆաբրիկան հատուկ ուշադրություն դարձրեց նաև մարզի բնակչության համար լայն սպառման ապրանքների արտադրությանը: Թեև այդ ձեռնարկությունից պատերազմի առաջին օրերին ռազմաճակատ էր մեկնել 67 մարդ, այնուամենայնիվ, ֆաբրիկան ոչ մի օր պարապուրդ չտվեց: Բանվորների պակասը լրացվեց թոշակառուների, կանանց և պատանիների հաշվին, որոնք, յուրացնելով ռազմաճակատում մարտնչող իրենց հարազատների մասնագիտությունը, դարձան արժանի փոխարինողներ: Նրանք, չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին (օրական տրվում էր 200-400 գրամ հաց), ոչ միայն կատարում էին պետական պլանները, այլև գերակատարում այն: Օրինակ՝ թոշակառու վարպետ Մովսես Գրիգորյանը, որի որդին կռվում էր ռազմաճակատում, իր օրական պլանը կատարում էր 300 տոկոսով, իսկ նրա գործընկեր Մադաթ Վարունցը՝ 250 տոկոսով: Դրա հետ մեկտեղ նրանք մեծ ուշադրություն էին դարձնում նոր կադրերի աճեցմանը: Ֆաբրիկայի աշխատավորները նույնպես անցել էին երկհերթ ու 12-ժամյա ռեժիմի: Նրանց պետական պլանները կախված էին նաև փայտանյութի հումքի ստացումից: Հումք մատակարարող Բալուջայի և Բարդայի սղոցարանների կոլեկտիվները, աշխատելով օրնիբուն, եղանակային անբարենպաստ, տարրական հարմարությունից զուրկ պայմաններում, շնորհիվ իրենց հերոսական աշխատանքի, ժամանակին ու որակյալ փայտանյութ էին մատակարարում կահույքի ֆաբրիկային:

Երկրի բուժհիմնարկները, զինվորական հոսպիտալները, ռազմական տեխնիկան խիստ կարիք ունեին որակյալ սպիրտի: Վիրավոր և հիվանդ զինվորների բուժման համար հարկավոր էին վիտամիններով հարուստ մրգեր, հատապտուղներ ու խոտաբույսեր: Ղարաբաղգինտրեստի ձեռնարկությունները արագորեն յուրացրին բարձրորակ սպիրտի թորման տեխնոլոգիան, ընդլայնեցին ընտիր չամիչի, քիշմիշի, խաղողի հյութի, դոշաբի արտադրությունը և այլն:

Իր աշխատանքները պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցեցին նաև մարզի արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ տարում արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները զգալի չափով ավելացրին վայրի հատապտուղների ու բանջարեղենի մթերումները: Եթե 1941 թ. նախատեսված էր մթերել 45,5 տոննա բանջարեղեն, ապա տարեվերջին մթերվեց 318,6 տոննա, 8,1 տոննա վայրի հատապտղի փոխարեն՝ 62 տոննա[19]: Դա հնարավորություն տվեց Ղարաբաղի արհեստագործական կոոպերացիայի միությանը ամբողջովին համապատասխան հումքով ապահովելու իր ենթակայության սննդի արդյունաբերության ձեռնարկությունները: Պատերազմական տարիներին նրանք բանակի կարիքների համար արտադրում էին բամբակե տաք բաճկոններ ու տաբատներ, ականջակալներով գլխարկներ, բրդյա գուլպաներ ու ձեռնոցներ, մարզի բնակչության համար՝ լայն սպառման ապրանքներ: Արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները կարճ ժամանակա-

[19] *РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 61.*

միջոցում կարողացան յուրացնել նաև նախկինում մարզ ներմուծվող ապրանքների արտադրությունը: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի “Вкуструд” արտելը 1941 թ. վերջերին բացեց “C” վիտամինի թողարկման արտադրամաս, որն աշխատում էր մարզի հանդերում աճող մասուրի և տանդուրի հումքի մշակման հիման վրա[20]:

Արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները զգալիորեն ավելացրին բանջարեղենի և վայրի հատապտուղների մթերումների քանակը: Օրինակ, եթե սկզբում նախատեսված էր, որ 1941 թ. պետք է մթերվեր 45,5 տոննա բանջարեղեն, ապա մինչև տարեվերջ մթերվեց 318,6 տոննա, 8,1 տոննա վայրի հատապտուղների փոխարեն՝ 62 տոննա[21]: Այդ ամենը հնարավորություն տվեց Ղարարհեստգործմիությանը հումքով ամբողջովին ապահովելու իր ենթակայությամբ սննդի արդյունաբերության ձեռնարկությունները:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1941 թ. հունիսի 26-ին հրամանագիր ստորագրեց «Պատերազմի ժամանակ բանվորների և ծառայողների աշխատանքային ժամանակի ռեժիմի մասին», ըստ որի՝ բանվորների ու ծառայողների համար սահմանվում էր մեկից մինչև երեք ժամ տևողությամբ պարտադիր արտաժամյա աշխատանք, վերացվում էին հերթական արձակուրդները՝ փոխարինելով դրանք չօգտագործված արձակուրդի համար դրամական փոխհատուցմամբ[22]: Այդ որոշումը կիրառվեց նաև ԼՂԻՄ-ում. բանվորների և ծառայողների աշխատաժամը հասցվեց մինչև 11-12 ժամի, արտադրական ձեռնարկություններն անցան երկհերթ աշխատանքային ռեժիմի: Հրամանագրի կիրառումը հնարավորություն տվեց առանց բանվորների թվի ավելացման ձեռնարկությունների արտադրական կարողությունները բարձրացնելու մեկ երրորդով:

Պատերազմի պայմաններում ձեռնտու չէր ծառայողական հիմնարկներում պահելու ուռճացված հաստիքներ: Հաստիքների կրճատման հետևանքով աշխատանքից ազատվածները ուղարկվեցին արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելու: Դրա շնորհիվ հատկապես ավելացավ մետաքսարդյունաբերության աշխատողների թվաքանակը[23]: Աշխատանքային հարուստ փորձ ունեցող բանվորուհիները նորեկներին սեղմ ժամկետում սովորեցնում էին իրենց արհեստը:

Կադրերի պատրաստման խնդիրը ծառացել էր նաև մարզի տեղական արդյունաբերության ձեռնարկությունների առջև: Այստեղ նոր աշխատողների համար կադրերի ուսուցման հարցը լուծվեց կանանց ու պատանիների հաշվին: Օրինակ՝ Ստեփանակերտի մեխանիկական արհեստանոցում արդեն 1941 թ. վերջերին սովորում էին 42, փայտամշակման ձեռնարկությունում՝ 62, Շուշիի գուլպատրիկոտաժի ֆաբրիկայում՝ 49 աշակերտ և այլն: Նրանց մեծ մասը կանայք էին.

---

[20] *Նույն տեղում:*

[21] *Նույն տեղում, թ. 62:*

[22] *Правда, 27.VI.1941. Սովետական Հայաստան, 28.VI.1941:*

[23] *ԼՂՀ ԱԱ, ֆ. 18, գ. 71, թ. 15:*

ռազմաճակատ մեկնած ամուսնուն փոխարինող մետաքսագործ Մանյա Սարգսյանը կարճ ժամանակում ոչ միայն տիրապետեց նոր մասնագիտությանը և պլանները կատարեց 190 տոկոսով, այլև աճեցրեց 10 որակյալ բանվորուհի: Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի աշխատողները, որոնք հիմնականում պատանիներ էին, պատերազմի առաջին ամիսներին յուրացրեցին տակառագործի արհեստը և տարեվերջին սկսեցին պատրաստել մեծ ու փոքր չափերի տակառներ, որոնք խիստ անհրաժեշտ էին հատկապես օղու թորման արտադրության մեջ: Կարմիր շուկայի սայլագործական արհեստանոցի կոլեկտիվը նույնպես համալրվեց պատանիների հաշվին[24]:

Այս գործընթացին հիմնականում խոչընդոտում էր տրանսպորտի անբավարար քանակությունը. դրանց զգալի մասը պատերազմի առաջին օրերին մոբիլիզացվել և ուղարկվել էր գործող բանակ: Շնորհիվ ձեռք առնված միջոցառումների՝ կարճ ժամանակահատվածում կարգի բերվեց պատերազմից առաջ կառուցված Ստեփանակերտ-Եվլախ նեղգիծ երկաթուղին: Այն աշխատեց իր ողջ կարողություններին համապատասխան: Ինչ վերաբերում է շրջկենտրոններից Ստեփանակերտի կայարան փոխադրումներին, ապա այն հիմնականում կատարվում էր ձիաքարշ տրանսպորտի՝ սայլերի միջոցով: Սակայն միջգյուղական և միջշրջանային ճանապարհները անբարեկարգ վիճակում էին, ուստի մարզի ղեկավարությունը լուրջ ուշադրություն դարձրեց այդ կարևոր հարցին: Այսպես, օրինակ, ԼՂԻՄ մարզկոմը իր մի շարք որոշումներով պարտավորեցնում էր բոլոր շրջկոմներին ու կոլտնտեսությունների կուսակցական կազմակերպություններին, ինչպես նաև մարզային ու շրջանային ճանապարհաշինարարական բաժիններին վերանորոգել Ստեփանակերտ-Մարտունի-Կարմիր շուկա, Շուշի-Լաչին, Շուշի-Աղդամ, Շուշի-Կարյագինո, Մարտակերտ-Քելբաջար (այժմ՝ Քարավաճառ), Տերտեր-Մարտակերտ, Հադրութ-Գյուզդեկ, Կարյագինո-Ստեփանակերտ, Աղդամ-Լաչին տեղական, շրջանային և հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհները և այդ նպատակով մոբիլիզացնել մարզի աշխատավորության ուժերը[25]:

Չնայած բանվորական ուժի սղությանը, արտադրության մեջ բանվորների ու կոլտնտեսականների զբաղվածությանը, համապատասխան տեխնիկայի ու միջոցների բացակայությանը՝ ճանապարհաշինարարների հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին մարզի ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհները տարվա բոլոր եղանակներին պահվեցին բանուկ վիճակում:

Մարզի արդյունաբերության առջև դրված խնդիրների կատարումը պահանջում էր բոլոր ուժերի ու հնարավորությունների առավելագույն լարում: Որակյալ բանվորական ձեռքի, վառելանյութի, էլեկտրաէներգիայի և անհրաժեշտ հումքի պակասությունը ստեղծել էր ծայրահեղ լարված վիճակ արդյունաբերության մի շարք տեղա-

---

[24] *Սովետական Ղարաբաղ, 28.XI.1941:*

[25] *РГАСПИ, ф. 17, оп. 43, д. 30, л. 87.*

մասերում: Հարկ էր ուղղակի ընթացքից գտնել և սովորեցնել նոր կադրերի, յուրացնել նոր տիպի հումքի մշակումը, կարճ ժամանակամիջոցում տիրապետել ստացման տեխնոլոգիային, փնտրել-գտնել մի շարք պակասուրդային ապրանքների հումքի փոխարինիչներ: Բանվոր դասակարգի հերոսական աշխատանքի շնորհիվ այդ դժվարությունները հաղթահարեցին և ԼՂԻՄ-ի արդյունաբերության աշխատողները պատվով կատարեցին «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» հայրենասիրական խնդիրը:

«Պատերազմի շրջանում ծնունդ առած աշխատավոր զանգվածների ստեղծագործական նախաձեռնությունն իր արտահայտությունը գտավ այնպիսի ձևերում, ինչպիսիք են մրցությունը մասնագիտությունների համատեղման համար, կոմերիտական-երիտասարդական բրիգադների և մյուս օղակների շարժումը,- գրում է պատմական գիտությունների թեկնածու Ռոնա Բալայանը:- Այդ ծանր օրերին Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը վերածվեց յուրօրինակ ռազմական ճամբարի»[26]: Այստեղից ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, արդյունաբերական և գյուղատնտեսական անհրաժեշտ ապրանքներ, որոնք խիստ անհրաժեշտ էին այդքան սպասված հաղթանակի համար:

ПЕРЕСТРОЙКА ПРОМЫШЛЕННОСТИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ НА ВОЕННЫЕ НУЖДЫ (1941-1942 гг.)

АРУТЮНЯН К. А.

Резюме

С первого дня Великой Отечественной войны, наряду с военно-мобилизационными и военно-оборонительными мероприятиями, значительная работа проводилась также по перестройке промышленности НКАО на военные нужды. Налаживалось производство военной продукции, и с этой целью были мобилизованы все местные ресурсы по повышению мощности действующих предприятий, рабочий день был продлен до 10-12 часов. Мобилизованных на фронт заменяли женщины, старики и подростки. Шелковый комбинат Степанакерта освоил технологии производства парашютной ткани и шелковой нити для хирургических операций. В руднике близ села Цакури Гадрутского района была начата добыча исландского шпата, который применялся в артиллерийской промышленности. В рудниках неподалеку от села Мехмана Мартакертского района началась добыча свинца для изготовления патронов. В области открылись цеха для производства повозок, седел и сбруй, кожевенные мастерские, мелкие фабрики

[26] **Բալայան Ռ.,** *Մեծ փորձությունների սկիզբը, Ստեփանակերտ, 1990, էջ 10:*

для производства спичек, мыла, фанеры, ящиков “М-50”, бочек стали осваивать производство древесины твердых пород для авиационной промышленности. В лечебных целях было освоено производство высококачественного спирта и витамина “С”. Для действующей армии стали производить телогрейки, ватные куртки и брюки, шапки-ушанки, шерстяные носки и перчатки. На Степанакертском механическом предприятии открылся литейный цех, суточная плавка которого составляла 1-3 т меди и 3-10 т чугуна, было освоено производство запчастей для сельхозмашин и т. д. Таким образом, благодаря героическому труду трудящихся области за короткое время НКАО превратилась в своеобразный военный лагерь, где все руководствовались лозунгом “Все для фронта, все для победы”.